

22703

L. Պ. ԱՆԴՐԵՅԵՎ

ԱՄՐԱՑՆԵԼ
ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՒՆ
ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

БИБЛИОТЕКА
Института
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

331.1
Ա - 58

ՀՐԱՄԱԿՁՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒԽԻԱՅԻՆ ԿՈՎԿԱ»
ՈՒՍՏՈՎ-ԴՈՒ

1933

15 JAN 2010

A 378

331-1

U-SB

Հ. Գ. ԱՆԴՐԵԱՆ

ԱՄՐԱՑՆԵԼ
ԱՃԻԱՏԱՆՔԱՅԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Թարգ. Վ. Ավագյան

ԵՎԼԱԿՈՒՆԻ
ИМСТИТУТА
ВІДОНОВЛЕННЯ
Академії Наук
СССР

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ԴՐԱՄԱՆ-ԳՈՆ
1933

05 FEB 2007

Կումունիստական կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգի մղած պայքարի շնորհիվ, առաջին հնգամյակում դրվել են մեր Խորհրդային Միության մեջ սոցիալիստական հասարակություն կառուցելու ամուր հիմքեր:

Խորհրդային Միությունը հետամսաց գյուղատնտեսական յերկրից վերածվել է արդյունաբերական յերկրի:

Սոցիալական արդյունաբերության ուժեղ զարգացումն առաջին հնգամյակում գյուղատնտեսությունը զինեց նոր տեխնիկայով. տրակտորները, կոմբայնները, պիկերները, տրակտորային կցվող ինվենտարները և այլն, այժմ հանդիսանում են գյուղատնտեսության արտադրության հիմնական գործիքներ: Կենտրոնացնելով այս նոր մեքենաները մեքենատնտեսային կայաններում, խորհրդային իշխանությունն արմատապես վերակառուցեց գյուղատնտեսությունը. վերջին յերեք տարում Խորհրդային Միության մեջ ստեղծվել են ափելի քան 200 հազար կողմանեառություններ, վորոնք ընդգրկում են գյուղացիական տնտեսությունների ավելի քան 60 տոկոսը: Բացի դրանից, կազմակերպված են հինգ հազար խորհանություններ:

Կոլտնտեսություններն ու խորհտնտեսություններն ընդգրկում են ցանքսատարածությունների մոտ 80 % -ը և հանդիսանում են սոցիալիստական գյուղատնտեսության հիմնական ձևը:

Առաջին հնագումյակը չքավոր միջակ տնտեսությունների կողմէկախվացման, նրանց մանրանհատական տնտեսություններ՝ խոշոր, համայնացված արտադրությանն անցնելու հնագումյակ եր: Այս պատմական խոշոր կարևորություն



60544-67



Nº 3039

Отв. редактор
А. Г. Авансьян
Техн. редактор
Г. М. Маркарьян.

Сд. в набор 11.II-1953 г.
Сд. в печать 16.II-1953 г
Об'ем 3,4 листа
Тираж 2000 экз.

Уполномоченного № Б-69 Газ.-жн. тип. СКПИО. Статформат Б6-125x176 Заказ № 829
Гор. Ростов на Дону.

ունեցող ինդիրը հաջողությամբ լուծվեց, չնայած այն կատաղի դիմադրությանը, վոր ցույց տվին կուրակային և հականեղափոխական տարրերը կոլեկտիվացումն անցկացնելու հանդեպ, չնայած աջ ոպպատունիստների փորձերին շրջելու կուսակցությունը կուրակության հետ համերաշխությամբ գործակցելու ուղիի վրա: Կոլտնտեսությունները վերջնականապես և անվիրադարձ կերպով հաղթեցին: Կոլտնտեսությունները գարձան մեր Միության գյուղատնտեսական արտադրության հիմնական և վճռական ուժ: «Մենք միայն կոլեկտիվացումը չեն, վոր հիմնականում ավարտեցինք: Մենք հասանք այն բանին, վոր գյուղատնտեսության խոշոր մեծամասնության դիտակցության մեջ կոլտնտեսությունները դարձան տնտեսության ամենալավունների ձևը»: (ԱՏԱԼԻՆ) Կոլտնտեսային կառուցվածքը հաղթեց: Սակայն կոլտնտեսային կառուցվածքը հաղթանակը յերբեք չի նշանակում, վոր մենք պետք ե թուրացնենք մեր ուշադրությունը գյուղատնտեսությունը զեկավարելու գործին, վոր կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական հետագա ամրապնդումը ինքնահոսի կարելի յի մատնել: Վայ մի դեպքում: Այսպես կարող են դատել միայն կոլտնտեսության և խորհրդային իշխանության թշնամիները: Նման ինքնահոսի ամբողջ վտանգը ցայտուն կերպով և բոլեվի կորեն ցույց տվեց ընկ. Ստալինը՝ «Գյուղում տարվող աշխատանքի մասին» իր արտասանած ճառում:

«Եթե իսկապես, կոլեկտիվ տնտեսության, վորպես տընտեսության գերիշխող ձեմքն անցնելը վոչ թե պակասեցնում, այլ ավելացնում և մեր հոգսը գյուղատնտեսության մասին, վոչ թե պակասեցնում, այլ ավելացնում և կոմունիստների զեկավարող գերը գյուղատնտեսության բարձրացման գործում: Այժմ ավելի քան յերեկոցել ինքնահոսը վտանգավոր և գյուղատնտեսության զարգացման համար: Ինքնահոսն այժմ կարող ե խորտակել ամեն ինչ»: Կոլտնտեսությունները հաղթանակացին: Դասակարգային թշնամին կոլտնտեսություններում սողոսկելով, ուղղակի հարձակումից անցավ լուս ու մունջ գործելակերպի»: (ԱՏԱԼԻՆ)

Փոխական վոհմակի մասցորդները, վորոնք կատաղաբար գիշմաղրում են կոլեկտիվացման, խորտակված են, բայց դեռ վերջնականապես չեն ջախջախված:

«Դուրս շպրավիլով իրենց ուղիից և ցվրվելով ամբողջ ԽՍՀՄ-ի վրա, այդ նախկին մարդիկ սեղոսկեցին մեր գործարաններն ու ֆաբրիկները, մեր հիմնարկություններն ու առևտրական կազմակերպությունները, յերկաթուղային և ջրային արանսպորտի ձեռնարկությունները և, գլխամուրապես, կորանտեսություններն ու խորհնանառությունները: Նրանք սարսկեցին և ամրացան այն տեղեր, հազան «բանվորին և «գյուղացու» դիմակ, իսկ նրանցից վոմանք ել նույն խալ խցկեցին կուսակցության մեջ»:

Կոլտնտեսությունների և խորհնանառությունների աճումը և նրանց հզորության ամրապնդումն ուժեղացնում են խորտակված, բայց զեռ վերջնականապես ջախջախված գասակարգային թշնամիների մասցորդների դիմադրությունը նոր կոլտնտեսային կառուցվածքին: Կոլակության, սպիտակ-զգարդիականության, հականեղափոխական վոհմակի մեացորդները չեն կարող հաշտվել այն մտքի հետ, վոր կոլտնտեսություններն ամրանում են: Նրանք ամեն կերպ աշխատում են քայքայել նրանց:

Սակայն կոլտնտեսությունը բացի ի բաց քայքայելը այդ գործի համար կոլտնտեսականներին ուղղակի կոչ անելու միջոցով—դա նշանակում է անպայման անհաջողության մատնել գործը: Այդ իսկ պատճառով դասակարգային թշնամու մեացորդները, հաշվի առնելով կոլտնտեսային կառուցվածքի վերջնականապես ամրացումը, փոխեցին կոլտնտեսությունների գետ պայքարելու ձեր: «Դասակարգային թշնամին կոլտնտեսություններում սողոսկելով, ուղղակի հարձակումից անցավ լուս ու մունջ գործելակերպի»: (ԱՏԱԼԻՆ)

«Այժմյան կոլակիներն ու յենթակուլակները» գյուղի այժմյան հակախորհրդային տարրերը—դա մեծ մասամբ «հեղ», «քաղցրախոս», համարյա «սուրբ» մարդիկ են: Նըրանց չպետք է կոլտնտեսություններից հեռու փնտռել.

Նրանք նստում են հենց կոլտնտեսության մեջ և գրավում
են այնտեղ պահեստապետների, տնտեսավարների, հաշվա-
պահների, քարտուղարների և այլն պաշտոններ։ Նրանք
յերբեք չեն սպում «կորչեն կոլտնտեսությունները»։ Նրանք
կոլտնտեսության «կողմանակից» են։ Սակայն նրանք կոլ-
տնտեսություններում կատարում են այնպիսի սարոտաժա-
յին և վասարար աշխատանք, վոր դրանից կոլտնտեսու-
թյունները չեն առողջանում։ (ԱՏԱԼԻՆ)

Դասակարգային թշնամին կոլտնտեսությունների դեմ
պայքարում են հենց կոլտնտեսությունների ներսում, փոր-
ձում և նրանց քայլքայել ներքուստ, վերցնելով իր ձևքը
կոլտնտեսությունների ղեկավարում։

Ահա թե ինչու մեր գործնական աշխատանքի հիմքը
պետք է լինի ընկ. Ստալինի այն ցուցմունքը, վոր «դասա-
կարգային այսպիսի սուր պայքարի, դեպքում, վորպիսին
այժմ գոյություն ունի մեզ մոտ՝ խորհրդային յերկրում,
արդեն «չեղոք» կոլտնտեսությունների համար տեղ չի մը-
նում. այսպիսի պայմաններում կոլտնտեսությունները կա-
րող են լինել կամ բոլցելիկյան, կամ հակախորհրդային։ Յեվ
յեթե մենք չենք ղեկավարում այս կամ այն կոլտնտեսու-
թյուններում, ապա դա նշանակում է, վոր նրանց ղեկա-
վարում են հակախորհրդային տարրերը»։ (ԱՏԱԼԻՆ)

Բոլոր կոլտնտեսությունները դարձնել բոլցելիկյան, վերջ-
նականապես վտարել այնտեղից դասակարգային թշնամու-
թացորդները, ամրացնել կոլտնտեսությունները կազմակերպ-
չորեն, տնտեսապես-քաղաքականապես—ահա սա յե գյու-
ղատնտեսության ասպարեզի գլխավոր խնդիրը, վորի հա-
ջող լուծման համար բոլցելիորեն պետք է պայքարեն կոլ-
տնտեսականները կոմունիստական կուսակցության ղեկա-
վարությամբ։

II.

Գյուղատնտեսական կամպանիաների անցկացման փորձը
Հյուսիսային Կովկասում ցույց տվեց, վոր դասակարգային
թշնամին—կուլակը և նըա ոպորտունիստական գործակա-
լությունը փորձում են քայլքայել կռաֆնտեսությունը, վո-
չչնչացնելով և խորտակելով կոլեկտիվ տնտեսության ամենա-
գլխավոր հիմունքները։

Կուլակության և սպիտակ գվարդիականության մնա-
ցորդները կուբանում, ինչպես ապացուցված եւ բազմաթիվ
փաստերով, փորձեցին կազմակերպել հականեղափոխական
սարոտաժ,—վիժեցնել հացամթերման սլանի կատարումը,
կազմակերպել անձեռնմխելի հասարակական սեփականության
հափշտակություն և վատնում, քայլքայել կոլտնտեսություն-
ներում աշխատանքային կարգապահությունը, վիժեցնել
կոլտնտեսությունների համայնական տնտեսությունը։

Իսկ չե վոր պիտության հանդեպ ունեցած առաջնա-
հերթ պարուսպորությունների կատարումը, հասարակական
սեփականության անձեռնմխելիությունը, աշխատանքային
խիստ կարգապահության սահմանումը նոր հասարակակարգի
հիմքերն են հանդիսանում կոլտնտեսությունների մեջ։ Քան-
դելով այս հիմքերը, դասակարգային թշնամուն ավելի հեշտ
կլիներ արդեն քանդել վոչնչացնել հենց կոլտնտեսության
սոցիալիստական եյությունը։ Դասակարգային թշնամին
հասկացավ այս և հատկապես հենց այս բնագավառներում
եր, վոր նա պայքար մղեց կոլտնտեսությունների կազմա-
կերպչական-տնտեսական ամրապնդման, խորհրդային իշխա-
նության դեմ, կազմակերպելով հացամթերումների և աշնա-
նացանի պլանների կատարման սարոտաժ։

«Եերբ մենատնտեսը յեկավ կուրնտեսություն, կուլտկը, յենթակուլակը, ոգտագործելով կուրնտեսականի, յերեկվա մենատնտեսի սեփականադրական հողերանությունը, ունեն ինչ անում ե, վորպեսզի քայքայի աշխատանքային կարգապահությունը, սովորեցնում ե աշխատել վոչ վորպես իր սեփական, այլ ոտար տնտեսության մեջ, սովորեցնում ե քիչ և վատ աշխատել: Եերբ դուք տեսնում եք կոլտնտեսականի ագրարակը, իսկույն աչքի յև զարնվում, թե ինչպես նրա բանջարանոցը երաշալի կերպով մշակված ե, իսկ կոլտնտեսային դաշտերը հաճուե խայտառակ վիճակի մեջ են: Միթե պարզ չե-այս բոլորի դասակարգային իմաստը: Միթե պարզ չե, վոր կոլտնտեսականի բարեիթղն և արդյունավետ աշխատանքի հարցը—դա դասակարգային կատաղի պայքարի ասպարեզն ե, ուր կուլակը փորձում ե կազմակերպել սարսամժ, կոլտնտեսային շնարարության վիճեցում»: (ԸՆԹՈԼԴԱՅԱՅՆՎ)

Զանագան միջոցներով քայքայելով աշխատանքային կարգապահությունը կոլտնտեսություններում, պայքարելով աշխատանքի արտագրողականության իջեցման համար, վարկարեկելով կոլտնտեսականների աչքի առաջ հասարակական աշխատանքը—դասակարգային թշնամին գրանով նենց լուրջ հարգած ե հասցնում կոլտնտեսությանը, սոցիալատական, հանրային սեփականությանը, վորը հանդիսանում է նոր կոլտնտեսային իրավակարգի հիմքը: Կոլտնտեսություններում աշխատանքի ամենախիտ կարգապահություն ստեղծելը, նշանակում ե ամրապնդել նրանցում հանրային սեփականությունը, նշանակում ե ամրացնել կոլտնտեսությունների հիման վրա կառուցված զյուղատնտեսության նոր հասարակակարգը: Ինկ հասարակական, սոցիալատական սեփականության պահպանման համար պայքարելը—դա մեր առաջնակարգ խնդիրն ե հանդիսանում:

«Մեր իրավակարգի հիմքը հանրային սեփականությունն ե հանդիսանում ճիշտ այսպես, ինչպես կապիտալիզմի հիմքը—մասնավոր սեփականությունն ե: Յեթե կապիտալիստ-

ները մասնավոր սեփականությունը սուրբ և անձեռնմխելի յեն հայտարարել իր ժամանակին ամրապնդելով կապիտալիստական հասարակակարգը, ապա մենք, կոմունիստներս, ավելի և պարտավոր ենք սուրբ և անձեռնմխելի հայտարարելու հանրային սեփականությունը, վորպեսզի դրանով նենց ամրացնենք տնտեսության նոր սոցիալիստական ձեր արտադրության և առևտորի բոլոր ասպարիզում»: (ՍՑԱԼԻՒՆ)

Կոլտնտեսությունների դեմ մղած իր պայքարում, գասակարգային թշնամին հերթին ոգտագործում ե մանր սեփականատիրական սովորությները, վոր ժառանգել են կոլտնտեսականներն անհատական տնտեսությունից և վորոնք (մանր-սեփականատիրական սովորությները) դեռ ամուր պահպան են կոլտնտեսականների վորոշ մասի մեջ: Սրա մասին պարզ ասել ե ընկ. Ստալինն առաջին հնգամյակի հանրագումարներից» մասին արած իր զեկուցման մեջ:

«Կոլտնտեսականներն իրենց դրությամբ արդեն մենատնտեսներ չեն, այլ կոլեկտիվիստներ, սակայն նրանց գիտակցությունն առայժմ դեռ հին ե—մասնավոր-սեփականատիրական: Յեվ ահա շահագործող դասակարգերի շահերից մնացած նախկին մարդիկ ոգտագործում են կոլտնտեսականների մասնավոր-սեփականատիրական սովորությները, վորպեսզի կազմակերպեն հասարակական գույքի հափշտակություն և զրանով խախտեն խորհրդային իրավակարգի հիմքը—հասարակական սեփականությունը»: (ՍՑԱԼԻՒՆ)

Կոլտնտեսականների այս մասնավոր-սեփականատիրական տրամադրությունները կոլտնտեսության դեմ ոգտագործելու ասպարիզում, կուլակը և հականեղափոխական տարրերը հենցում են դասակարգային զգոնության բթացման և յերբեմն ել կուսակցության գործի ուղղակի գավաճանելու վրա՝ կոմունիստների մի մասի կողմից: Հացամթերումների և կոլտնտեսությունների դեմ կուլակության կազմակերպած հականեղափոխական սարստաժի դեմ տարվող պայքարը և յերկրամասում անցկացվող գյուղական կուսկազմակերպությունների զտումը ցույց տվին, վոր կուսարքերն զգալու-

բեն աղտոտվել են դասակարգայնորեն թշնամի տարրերով (կուլտակներ, սպիտակ-դվարդիականներ և այլն): Կոմունիստների այս մասը, ոգտվելով կուսակցության մեջ ունեցած իր դիրքից և գտնվելով հաճախ կոլտնտեսությունների զեկաւարության մեջ, գործով վարել ե կոլտնտեսությունները քայլականություն, կուլակության շահերից թերագրված քաղաքականություն:

Փոխանակ աշխատանքային կարգապահության համար պայքարելու, գրավանելում կուսառն ունեցող այս թշնամիները, ընդհակառակն ավելի ևս քայլայեցին այն. փոխանակ պետության հանդեպ ունեցած պարտավորություններն առաջին հերթին կատարելու, կուսակցության այս դաշտաներն իրենք թագցրին հացը հորերում, դուրս յեկան հացամթերման պլանի դեմ և դրանով հենց քանդեցին կոլտնտեսությունները: Ահա թե ինչու յերկրամասի մի շարք ստանիցաներում և կոլտնտեսություններում, մանավանդ կուրանում, կուլակին հաջողվեց վորոշ հաջողություններ ձեռք բերել ցանքսի և հացամթերումների դեմ սարուաժ կազմակերպելու գործում և սրանով վեստել կոլտնտեսային շինարարությանը:



Կոյունտեսության սոցիալիստական եյության հիմքերից մեկը հանդիսացող աշխատանքային կարգապահության քայլայքումը կատարվել և կատարվում ե զանազան ձևերով և զանազան ուղիներով: Ամենատարածված ուղին—դա կոլտնտեսության հասարակական աշխատանքին մասնակցելուց հրաժարվելն է, դա ածխատանիք դաւրս չգալի ե: Այս ապացուցելու համար բազմաթիվ փաստեր կապելի յե բերել, որինակ՝

Աղիկեյի ինքնավար մարզի «Տրուդովոյ գիգանտ» կոլտնտեսության մեջ, 1932 թվի հունիսի 25-ից մինչև ողոստոսի 30-ը, միջին հաշվով աշխատանքի դուրս են յեկել բռնոր կելանտեսականների 55 տոկոսը: Ընկ. Ստալինի վեց պայմանների անվան կոլտնտեսության մեջ, (Մողդոկի ույոն) ապրիլամսում Հովհաննեայնի բրիգադում աշխատանքի դուրս ե յեկել կոլտնտեսականների 46 տոկոսը, մայիսին—46 տոկոս, հունիսին—44 տոկոս: Կանևսկի ուայոնի «Կարմիր հասկ» կոլտնտեսության մեջ աշնանային դաշտային աշխատանքների ժամանակ աշխատանքի դուրս գալը կազմել ե 62 տոկոս: Բացի դրանից, կոլտնտեսության մեջ վոչ մի մասսայական՝ բացատրական աշխատանք չի տարվել: Յերբ սկսում ես քրքրել կոլտնտեսականների կողմից աշխատանքի դուրս չգալու արմատները, հիմքերը, ապա ընդհարվում ես բազմաթիվ «պատճառների», վորոնք իրականում հանդիսանում են պարզապես ձեւական պատճառներ: Որինակի համար, Գեյորգիևսկի ուայոնի «Հանուն խորհրդների իշխանության» կոլտնտեսության մեջ կոլտնտեսուհիները քաղանիք—բերքահավաքի կամպանիայում վատ եյին դուրս

դալիս աշխատանքի: Դուրս չկալու «պատճառը» վարպետ թե յեղել ե այն, վոր կոլտնտեսուհիները չեն ցանկացել իրենց հաշվին յերեխաների համար՝ հասարակական սնունդ կազմակերպել մասկամսուրներում: «Մենք կաթ չենք բերում ոտար յերեխաների համար, —ասում եյին կոլտնտեսուհիները, —թող մեր յերեխաները տանը նստեն և մենք ել նրանց հետ տանը կնստենք: Մենք կիմանանք, վոր մեր յերեխաները կաթ կիմենք»: Կուշչևակի ույոնի «կարմիր աշխագործ» կոլտնտեսության մեջ աշխատանքի դուրս եյին գալիս կոլտնտեսականների 62—65 տոկոսը, իսկ պատճառն իբր թե այն ե յեղել, վոր դաշտային աշխատանքի ցածր գնահատվելու հետևանքով, կոլտնտեսականներին «ձեռնտու չի յեղել» դաշտում աշխատել և այլն:

իհարկե, կոլտնտեսականների՝ դաշտում աշխատելու համար նյութական-կենցաղային և կաղմակերպչական պայմանների (վրանների և մանկամուռների շինարարությունը, հասարակական սննդի կաղմակերպումը, աշխատանքի ճիշտ գնահատումը և աշխարհերի ճիշտ հաշվառումը և այլն) ստեղծումը դրական ազգեցություն և թողնում աշխատանքային կարգապահության և աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա:

Սակայն, աշխատանքի գուրս չգալին առաջին հերթին հետևանք է նրա, վոր կոլտնտեսականը յերբեմն կոլտնտեսության համայնական տնտեսության վրա նայում է, վոչ վորպես իրեն, այլ ոտար տնտեսության վրա: Նրա այդ գիտակցությունը դեռ հին է, մասնավոր-սեփականատիրական, Սրանից ել հենց ոգտվում է կուլակը, այսպիսի ճառ ասելով. «Ինչու համար աշխատել մեկ է, վոչինչ չեմ ստանա, ավելի լավ է ինձ համար բանջարանոց, այդի կոնկեմ և նրանից յեկամուտ կստանամ»: Աշխատանքային կարգապահությունը քայլայելու յերկրորդ մասայական միջոցը՝ դա աշխատանքի ցածր արտադրողականությունն է: Մարդիկ աշխատանքի գուրս գալով, ձեւցնում են, վոր իրը թե աշխատում են, բայց խսկապես վոչինչ չեն անում, այլ մի-

սյն շատախոսում են: Որինակի համար, կանևսկի ռայոնի Կաբըմիր հասկ» կոլտնտեսության մեջ 1932 թվի աշնանը, իրավանակ յերկխոփանի գութանով որական 1,5 հեկտար վարելու, վարել են միայն 0,75 հեկտար, այսինքն սահմանված նորմայի կեսը: Սալսկի ռայոնի «Հողագործ» կոլտնտեսության մեջ կուլտիվատորով մշակել են 1,5 հեկտար, փոխանակ սահմանված 2 հեկտարի:

թե աշխատանքի դուրս չգալը և թե աշխատանքի ցածր
արտադրողականությունը, կազմալուծելով աշխատանքային
կարգապահությունը, հարվածում և քանդում են կուտանե-
սային շինարարության հիմքերը, խախտում են հանրային
սեփականության անձեռնմխելիությունը: Չե վոր այն հըս-
կայական կորուստները, վոր անցյալ տարի ունեցան մի
շարք կոլտնտեսություններ՝ ցանքուր, բերքահավաքը, դի-
զումը, մոլախոտերի վոչնչացումը ժամանակին չկտարելու
պատճառով—ուղղակի աշխատանքի վատ կարգապահու-
թյան կամ նրա բացակայության հետևանք են յեղել Մի-
թե հսարավոր ե բարձրացնել կոլտնտեսությունների և կոլ-
տնտեսականների յեկամուտը, յեթե աշխատանքի դուրս գա
կոլտնտեսականների ընդամենը 50 տոկոսը: Միթե կարելի
յե լավացնել և ամրացնել կոլտնտեսությունը, յեթե կոլտն-
տեսականներն ընդամենը կատարեն սահմանված նորմայի
50 տոկոսը: Իհարկե, վհչ իսկ չե վոր աշխատանքի դուրս
չգալով, քիչ արտադրելով, ոգնած կինենք կուրակին՝
կոլտնտեսությունների դեմ նրա մղած պայքարում: Այն
կոլտնտեսականնը, վորն աշխատանքի դուրս չի գալիս կամ
վատ ե աշխատում, նա կուրակի բարեկամն ե, կոլտնտեսու-
թյան թշնամին: Նա քայքայում ե կոլտնտեսությունը, նա
խախտում ե նրա սոցիալիստական հիմքերը և կողոպտում ե
բարեխիղճ կոլտնտեսականներին, վորոնք անձնվերաբր
պարարում են կոլտնտեսության ամրապնդման համար:

«Եւսինի ցուցմունքների համաձայն, կոլտնտեսություններում ամբողջովին պետք է կիրառվի հիմնական սոցիական կանոնը. «Ով չի աշխատում նա չի ուտի»; Կա-

րող ե պատահել, վոր կան մարդիկ, վորոնք սոցիալիզմը համաշնում են այսպես, թե քանի վոր սոցիալիզմ ե, ապա յես չպիտի աշխատեմ, իսկ ինձ համար կաշխատեն ուրիշները: Պարզ ե, վոր այսպիսի տեսակետ—«յես պետք ե քիչ աշխատեմ, թող աշխատի՞ նա, ով ուզում ե, աշխատանքը հիմարներին ե սիրում»,—սա վոչ թե սոցիալիստական տեսակետ ե, այլ ամենախսկական, ամենաարմատական կապիտալիստական և շահագործական տեսակետ: Վող շահագործումը հիմնված ե այն բանի վրա, վոր հարուստը չի աշխատում, բայց նրա համար աշխատում են ուրիշներ»:

(ՑԱՆՈՎԼԵՎ)

Այդ իսկ պատճառով ծույլ գործալիք, կորցիչ, կոլտնտեսային աշխատանքային կարգապահությունը քայլայողների դեմ վճռական պայքար մղելը—հանդիսանում ե կոլտնտեսությունների կարևորագույն խնդիր, մանավանդ առաջիկա գարնանացանի կամպանիայում:

Տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպությունները պետք ե անմիջապես, մարտական թափով ձեռնարկեն կոլտնտեսություններում նոր հասարակական աշխատանքային կարգապահություն ստեղծելու և ամրացնելու գործին: Բոլցեիկյան ամրող վճռականությամբ իսկույն պետք ե վերացնել այն սիսաները, վորոնք բաց են թողնված կոլտնտեսությունների ղեկավարության կողմից: Իսկ չե վոր այդպիսի սիսաներ քիչ չեն կատարվել:

Միթե առանձին կուսակցական և խորհրդային կազմակերպություններ և կոմունիստներից վոմանք հանցավոր չեն նրանում, վոր մի շարք կոլտնտեսություններում թույլ տալով յեկամուտների բաշխումն ըստ շնչի, նպաստավոր պայմաններ են ստեղծում կուլակային հավասարեցման, ծուլության և կորզողության զարգացման համար և այլն: Միթե նրանք մեղավոր չեն նրանով, վոր ծույլերի, գործալիքների, սիմուլյանտների և կոլտնտեսության այլ թշնամիների գեմ ժամանակին վճռական միջոցներ ձեռք չառնելու պատճառով, նպաստավոր պայմաններ են ստեղծում աշխա-

տանքային կարգապահության քայլայման համար: Միթե կուսակցական և խորհրդային առանձին կազմակերպությունները հանցավոր չեն նրանով, վոր մի շարք դեպքերում թուլացնելով պայքարը կուլակային և հականեղափոխական տարրերի դեմ, կորցնելով դասակարգային գործությունները և անձնատուր լինելով կուլակային տրամադրություններին, դրանով հենց բարեհաջող պայմաններ ստեղծեցին՝ քայլայելու աշխատանքային կարգապահություննը և խորհրդակելու կոլտնտեսությունը: Միթե նրանք հանցավոր չեն այն բանում, վոր աշխատանքի գուրս գալու սխալ հաշվաման, տարրներ, մանկամասուրներ, հասարակական ու նույնդ չկազմակերպելու, կանխավճարները ժամանակին չըրացնելու, աշխարերի հաշվառքը ժամանակին չկատարելու պատճառով, այնպիսի պայմաններ ստեղծեցին, վոր կուլակը, ոգտագործելով կոլտնտեսականների մասնավորականատիրական տրամադրությունները, կազմալուծում ե աշխատանքային կարգապահություննը կոլտնտեսություններում, վիճեցնում ե աշխատանքի դուրս գործը, պլանների կատարումը և այլն: Եթե այս բոլորի մեջ առաջին հերթին հանցավոր են այն տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպությունները, վորոնք վատ են ղեկավարում կոլտնտեսությունները, վորոնք թույլ են տալիս հակախորհադային տարրերին սողոսկելու կոլտնտեսությունների դեկավորության մեջ:

Անհրաժեշտ է վճռականապես վերջ տալ այս բոլորին, անհրաժեշտ է կոլտնտեսություններում կազմակերպել ուժեղ աշխատանքային կարգապահություն և նրանց դարձնել իսկական, բոլցեիկյան կոլտնտեսություններ, դուրս շպրտելով այնտեղից հակախորհադային տարրերին: Սա հիմնական խնդիրներից մեկն ե, քանի վոր հենց ինքը, խոշոր արտադրության տեխնիկան պահանջում է ամենախիստ կարգապահություն աշխատանքի մեջ:

ԽՍՀՄ-ի ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և Համեմակուսի (թ) Կենտրոնական Կոմիտեն մատնանշում են, վոր «առանց կոլտնտեսություններում և խորհանտեսություններում աշխատանքային ուժեղ կարգապահություն սահմանելու, չի կարելի հաջողությամբ անցկացնել գարնանացանը, սրան համապատասխան, այն կոլտնտեսականները, վորոնք դուրս չեն գալիս աշխատանքի, չարամտորեն և անփույթ են վերաբերվում դաշտային աշխատանքին, նրանք պետք ե պատժվեն՝ առանց վորեե ներողամոռության և մինչև իսկ վտարվեն կոլտնտեսությունները» (Կենտկոմի և ԽՍՀՄ ժողովում սովորենի «գարնանացանի կազմակերպման միջոցառուների մասին չյուսիսային Կովկասում» կայացրած վորոշումից): Կուսակցության և ժողովում սույնի խորոր քաղաքական նշանակություն, ցույց տալով այն ուղին, վորով հնարավոր և հաջողություններ ձեռք բերել գարնանացանի կամպանիայում:

«Խորհրդային Միության ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և Համեմակուսի (թ) Կենտրոնական Կոմիտեն, չյուսիսային Կովկասում գարնանացանի կամպանիայի հիմնական խնդիր են զնում վոչչացնել մոլախոտերը, միովին հավաքել սերմացուն, վոչ մի բոպե չուշանալ ցանքսին և լրիվ կատարել ցանքսի պլանը, կրճատել ցանքսի ժամկետները և իրավես լավացնել հողի մշակման վորակը»:

Այս կարեռագույն խնդիրները կարող են լուծվել միայն այն դեպքում, յերբ կոլտնտեսություններում ստեղծվի աշխատանքային ուժեղ կարգապահություն, յերբ կոլտնտեսականները հարցուր տոկոսով աշխատանքի դուրս գան,

գործակումներ չինեն և կատարվեն սահմանված արտադրական նորմաները:

«Առանց ուժեղ աշխատանքային կարգապահություն սահմաններու, հնարավոր չի կոլտնտեսությունների ամբաւանդումը և կոլտնտեսականների գործնական, արագ զարգացումն ու բարեկեցությունը (ԽՍՀՄ Կենտգործկոմի հունվարյան նստաշրջանի վորոշումից «կոլտնտեսությունների ամբավանդման մասին»):

Իսկ ինչ ճանապարհներով, ինչ միջոցներով ե, վոր կուսակցական և խորհրդային կազմակերպությունները, մեքենատրականությամբ կայանները և կոլտնտեսությունների վարչությունները պետք է կազմակերպեն բոլեկիցան աշխատանքային կարգապահությունը կոլտնտեսություններում Այս միջոցները յերեք են:

Համօգելով, այսինքն՝ կոլտնտեսականների միջև տանելով մասսայական քաղաքական լայն աշխատանք, նյութական շահագրգուռքը, այսինքն ստեղծել այնպիսի պայմաններ և այնպես կազմակերպել աշխատանքը, վոր կոլտնտեսականը շահագրգուված լինի աշխատանքով:

Ստիպոգականների վարչությամբ, այսինքն ձեռք առնել այնպիսի միջոցներ, վորոնք ուղղված լինեն պայքարելու աշխատանքային կարգապահության խախտման դեմ՝ դաստիարակչական և պատժիչ միջոցներ:

Ենինը հաճախ մատնանշել ե, վոր անհրաժեշտ և ստիպոցական միջոցներ կիրառել նրանց նկատմամբ, ովքեր վիճեցնում են «աշխատավորների ընկերական կարգապահության» ամբացումը. նա ասել ե՝

«Ի հարկե մարդկային պատմության մեջ այս վիթխարի փոխանցումը՝ հարկադիր աշխատանքից պատ աշխատանքի, չի կարող տեղի ունենալ առանց ընդհարումների, դժվարությունների, առանց ստիպոցականության՝ ունակացած ձրիակերների և նրանց արբանյակների վերաբերմամբ»:

«Հատկապես մեծ ուշադրություն կարդանի աշխատավորների ընկերական կարգապահությունը զարդարեցնելու և



ամբացնելու և նրանց ինքնագործունեցությունն ու պատասխանատվության գիտակցությունը բաղմակողմանիորեն բարձրացնելու վրա։ Սրանումն և կայանում յեթե վոչ միակ, ապա զոնե պլիսագորագույն միջոց՝ վերջնականապես հաղթահարելու կապիտալիզմը և այն սովորութները, վորոնք ստեղծված են արտադրության միջոցների մասնագոր սեփականության տիրապետության էռումից։

Ինարկե, այս բոլոր միջոցառութներից զրական արդյունքների կարելի յէ համեմ միայն այն գեպքում, յերբ մէքենա-արականորային կայանները, քաղբաժնները և կոլտնտեսությունների վարչություններն ընդունակ լինեն բոլշևիկորեն և նպատակահարմար յեղանակով անցկացնելու այդ միջոցառութները, կարողանան նրանց զուգընթաց ծավալի նաև չայն մասսաների սոցմքումն ու հարվածայնությունը և ինքնագործունեցությունը՝ աշխատանքի արտադրողականությունն ու փորակը բարձրացնելու գործում։

Իսկ ինչպիսի նախնական միջոցառութներ պետք են անցկացվեն կոլտնտեսություններում, վորպեսզի ճնարավոր լինի բարեհաջող պայմաններ ստեղծել՝ ամուր աշխատանքային կարգապահություն—միասնական աշխատանքների կարգապահություն, գիտակից կոլտնտեսականների կարգապահություն կազմակերպելու համար։

Յուրաքանչյուր ըրիկադ վերջինիս յուրաքանչյուր կոլտնտեսական պետք են ծանոթ լինի գարնանացանի պլանին, աշխատանքների ծավալին, աշխատանքների կատարման գայրին և ժամկետներին։ Յուրաքանչյուր կոլտնտեսական պետք են զիտենա արտադրանքի սահմանագոր սորմանները, աշխատանքների գնահատումներում, յուրաքանչյուր կոլտնտեսական ըրիկադիրէց պետք են ստանա ցանքսային աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ փորոշ առաջարկանք, գիտենա վոր խմբում, յերբ և վորի հետ նա պիտի աշխատի։ Հետեւարար, զարնանացանից առաջ անհրաժեշտ է անցկացնել լայն մասսայական աշխատանք, բացատրել կոլ-

տնտեսականներին ցանքսի նշանակությունը, կոլտնտեսությունների և կոլտնտեսականների առաջ դրված խնդիրները և այն պատասխանատվությունը, վորն ընկնում ե ցանքսի հաջող կատարման համար։ Հենց ցանքսի ժամանակ հարկավոր և բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի աշխատանքի դուրս չգալու, զործալիման, աշխատանքի ցածրաբրողականության յեվ վոչ մի դեպք առանց հայտնաբերելու յեվ պատճինու չմնա։ Բրիգադիրը պարտավոր ե բրիգադում պահել աշխատանքի ուրս գալու ճիշտ հաշվը, յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի ճիշտ հաշվառքը։ Առանց հարգելի պատճառների կատարվող դորձակաման ամեն մի գեպք պետք ե պատճին։ «Կոլտնտեսություններում սահմանել այնպիսի մի կարգ, վոր անհարգելի պատճառով յեղած գործակքումը տուգանվի 5 աշխորով, իսկ չարամիտ գործալիքին՝ զուրս հանել կոլտնտեսությունից, դատապարտելով նրան բոլոր պարտավորությունները կատարելու պատճին և կիրառել ներգործության միջոցներ՝ վորպես մենատնտեսի» («գարնանացանի խնդիրների մասին» կայացրած Յերկրկոմի պլենումի վորոշումից)։

ԽՍՀՄ-ի կենտրոնական գործեց գյուղատնտեսական արտելի կանոնագրությունը լրացնել հետեւյալ կետով։ «Եթե կոլտնտեսության անդամը անհարգելի պատճառով հրաժարվի կոլտնտեսության կողմից իրեն հանձնարարված աշխատանքից, այդ գեպքում կոլտնտեսության վարչությունը պարտավոր ե նրան տուգանել մինչև 5 աշխորաչափ, իսկ յեթե կրկին անգամ հրաժարվի, ապա վտարել նրան կոլտնտեսությունից»։

Սա նշանակում է, վոր չարամիտ գործալիքը, վտարվելով կոլտնտեսությունից, պետք են հարկ վճարի վորպես մենատնտես, նրանից պետք ե խրվի սեփական ազարակը, իսկ ինքը և իր ընտանիքը վարչական մարմինների վորոշմամբ, կարող են աքսորվել յերկրամասի սահմաններից զուրք գեպի հուսիսային մարգերը, վորպես հակախորհրդային տարր, վորպես խորհրդային իշխանության թշնամի։

Աշխատանքի դուրս չգալու և գործարութեների դեմ պայքարելու վերոհիշյալ բոլոր միջոցառութեները պետք ե կրեն հասարակական-քաղաքական բնույթի Այդ միջոցառութեներն այնպես անցիկացնել, զոր նրանք հայտնի լինեն յուրաքանչ չուր կոլտնտեսականի և յուրաքանչյուր կոլտնտեսունու, Դրա համար պետք ե գործալիքի ազգանունը կախել աչքի ընկնող տեղ բրիգադում, կախել «գործալիքի տախտակ» և ամեն մի գործալիքին շրջապատել՝ անարդանքի, հասարակական արժամարդանքի մթնոլորտով։ Գործալքություն համար տուքաներու կամ կոլտնտեսությունից վտարելու ամեն մի գեղաք պետք ե քննարկվի բրիգադի ժողովներում։ Անցկացնելով գործալքության դեմ պայքարելու այս միջոցառուները, միաժամանակ հարկավոր ե վճռականապես պայքարել աշխատանքի ժամանակ ծուլություն անելու, վատ արտադրելու դեմ, զորը յերբեմն կրում ե «թաղուն գործարքության» բնույթի։ Լայն սոցմրցում պետք ե կազմակերպել առանձին բրիգադների, խմբերի և կոլտնտեսականների միջև։ Սոցմրցման և հարվածայնության հիման վրա, ստուգելով պայմանագրերի կատարումը և օճաշվի առնելով կատարված պարտավորությունները, պետք ե պայքարել ծույլերի, սիմուլյանտների, աշխատանքին անփույթ և անբարեխիղ վերաբերվելու դեմ։ Սոցմրցման ընթացքը և նրա արդյունքները պետք ե քննության առնել կոլտնտեսականների ժողովներում վոչ թե ընդհանրապես, այլ կոնկրետորեն յուրաքանչյուր մրցակցող կոլտնտեսականի վերաբերմամբ։ Ծույլերին վոչ թե միայն պետք ե հասարակական կշտամբանքի յենթարկել կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում, այլ նաև պետք ե ստիպել նրանց աշխատել Մույլերի, սիմուլյանտների և կորդիչների նկատմամբ բացի վերոհիշյալ միջոցներ գործադրելուց անհաջողությունը միջոցառութեներն անցկացնելով և միաժամանակ ուժեղ պայքար մղելով աշխատանքային կարգապահությունը խախտող բոլոր յերեւյթների դեմ, լիսվին հնարավոր ե ամրացնել աշխատանքային կարգապահությունը։ Այժմ կուսակցությունը կոլտնտեսությունների ձեռքը տվել ե մի նոր ուժեղ լծակ, աշխատանքային կարգապահությունն ուժեղացնելու և, նետեաբար, նրանց տնտեսապես և կազմակերպութեն ամրացներու համար—դա հարկի կարգով հացանաթիկ պետությունները և, կոնտրակտային

պետք ե իջեցնել հասանելիք աշխարերի քանակը մինչև 25 տոկոս։ Կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կամ կողմանտեսության վարչության վորոշմամբ ծույլերին, սիմուլյանտներին, կորդիչներին ժամանակավորապես զրկել արդյունաբերական ապրանքներ ստանալու, ինչպես նաև կողմանտեսության կողմից անհատապես սպասարկվելու իրավունքից (իր ափարակի հերկումը, անասնի համար կերպանալը, վառելիք փոխազդելլ և այլն)։ Պահանջելով կողմանտեսականներից բարեխիղդ սոցիալիստական վերաբերմունք գեղի աշխատանք, մացնելով խիստ պրոխարական կարգապահություն, կոլտնտեսությունների վարչությունները և բրիգադները պետք ե հոգան աշխատող կոլտնտեսականների համար նպաստավոր պայմաններ ստեղծելու մասին, կազմակերպել մշտական տաքոր, զոր ունինա կոլտնտեսականների գիշերելու համար շենքեր, կազմակերպել հասարակական սննունդ, կառուցել մանկամուրներ, քաղանիքամակերպել հասարակական կազմակերպել ընտանիքավոր կանանց կառքով դաշտ վոխազդելու և տուն վերաբարձնելու գործը, կոլտնտեսության միջոցով հերկել կոլտնտեսականների անհատական ազարակները, կոլտնտեսականների անասունները կերպով ապահովել, վառելիք փոխազդել, կոլտնտեսականներին տալ հանդսաի որեր և հասրավորություն կոլտնտեսության ձիերով կոլտնտեսային շուկա գնալու, նրանց դրամական կանխավճարներ տալ դրագացնել կոլտնտեսային առևտուրը և այլն—ահա նյութական շահագրսության այս բոլոր միջոցառութեներն անցկացնելով և միաժամանակ ուժեղ պայքար մղելով աշխատանքային կարգապահությունը խախտող բոլոր յերեւյթների դեմ, լիսվին հնարավոր ե ամրացնել աշխատանքային կարգապահությունը։ Այժմ կուսակցությունը կոլտնտեսությունների ձեռքը տվել ե մի նոր ուժեղ լծակ, աշխատանքային կարգապահությունն ուժեղացնելու և, նետեաբար, նրանց տնտեսապես և կազմակերպութեն ամրացներու համար—դա հարկի կարգով հացանաթիկ պետությունները և, կոնտրակտային

պայմանագրով հացը պետությանը հանձնելու փոխարեն:
Այս որենքը, սահմանելով կոլտնտեսությունների կողմից
հացահատիկը պետության հանձնելու կայտն նորմաներ,
նկատի ունի հետեւյալը, վոր «հացահատիկը պետությանը
հանձնելու վերաբերյալ պարտավորությունները կատարե-
րուց հետո, մնացած հաց ահատիկը լինելու յէ կոլտնտեսու-
թյունների, կոլտնտեսականների և անհատականների լիա-
կատար տրամադրության տակ»:

Կոլտնտեսություններն ու կոլտնտեսականները շահագր-
գոված են նրանով, վոր աշխատանքի ճիշտ կազմակերպ-
ման միջոցով, աշխատանքին սոցիալիստական վերաբեր-
մունք ցույց տալու, աշխատանքային կարգապահությունն
ամրացնելու հիման վրա, ապահովեն բերքագուրյան բարձ-
րագումը—ներկային այս կարևորագույն խնդիրը, հետեւ-
րար, բարիմնարն կատարելով հացահանձնման պարտավո-
րությունները, ապահովել իրեն նաև մեծ քանակությամբ
հացահատիկով: Յեթե կոլտնտեսությունը լավ աշխատի, յե-
թե ուժեղ աշխատանքային կարգապահություն լինի, ապա
նրա տրամադրության տակ ավելի շատ հաց կմնա: Յեզ,
ընդհակառակը յեթե կոլտնտեսությունը վատ աշխատի,
ապա թե ինքը և թե կոլտնտեսականները քիչ քանակու-
թյամբ հաց կունենան:

Այս կարևորագույն որենքը, վոր վիթխարի նշանակու-
թյուն ունի կոլտնտեսությունների կազմակերպչական-տն-
տեսական ամրապնդման համար, պետք և ոդտագործել վոր-
պես կոլտնտեսություններում աշխատանքային կարգապա-
հությունն ամրացնող գենք: Սակայն, այս լծակը պետք և
ոդտագործել նպատակահարմար և կազմակերպված յեղա-
նակով:

Պենումը հատկապես ընդգծում է, վոր մթերման նոր
կարգի մասին յեղած գեկրետի շնորհիվ, կոլտնտեսականնե-
րի նյութական շահագրգության ուժեղացումը ինքնըստ-
ինքյան գեռ չի ապահովում կոլտնտեսությունների ամրապն-
դումը, վոր կոլտնտեսության աշխատանքում հայտնաբեր-

վոր ամեն մի ինքնահոս կառաջնորդի նրան դեպի անկում:
Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամ-
րապնդումը և հետագա վերելքն ապահովելու համար, անհ-
քաֆեշտ են համար պայքար և բողեկիցյան ուժեղ զեկավա-
րություն (Համկոմկուսի (բ) Յերկրկոմի հունվարյան պլե-
նումի վորոշումից «գարնանացանի խնդիրների մասին»):

Աշխատանքային կարգապահությունն ամրացնելու գոր-
ծում պետք է հենվել կոլտնտեսային ակտիվի վեա, այն ակտի-
վի վրա, վորը կոփիկը ու ամրացել և կոլտնտեսության և
խորհրդային իշխանության հանդեպ կուլակության կազ-
մակերպած սարուտաժի գեմ մղվող պայքարում:


«Անկուսակցական ակտիվ սանելով, կուսակցությունը
հասկանում և այն կոլտնտեսականներին և խորհրդնտեսա-
յին բանվորներին, վորոնք գործնական մասնակցություն-
նեն ցույց տալիս հասարակական-քաղաքական աշխատանքում,
յեռանդուն կերպով պայքարում են կուլակային սարուտաժի
դեմ և միենույն ժամանակ աշխատանքի լավ որինակներ
են ցույց տալիս, աշխատանքի և հանրային սեփականու-
թյան հանդեպ բարեխզնորեն վերաբերելու առաջավոր
որինակներ են հանդիսանում» (Յերկրկոմի պլենումի վորո-
շումից «անկուսակցական ակտիվի հետ աշխատելու մասին»):

Հենց ակտիվի միջոցով և, վոր պետք և հայտաբերել
անհարգելի գործարքման, աշխատանքի հանդեպ ցույց տը-
վող անբարեխիղճ վերաբերմունքի, աշխատանքի արտադ-
րողականության ամեն մի դեպք: Ակտիվը պետք և ոգնի
ըրիգաղիբերին հայտաբերելու կոլտնտեսականների դեմքը,
նրանց վերաբերմունքն աշխատանքի հանդեպ, աշխատան-
քային կարգապահության գրությունը բրիգադում: աշխա-
տանքային կարգապահության խախտման ամեն մի դեպք քն-
նության պետք և յենթարկել կոլտնանսային ակտիվի հետ
միասին: Հենց ակտիվի միջոցով և, վոր պետք և կազմակերպել
այն հասարակական արհամարհանքը, վորով պետք և ընջա-
պատվի յուրաքանչյուր գործալիք, ծույլ սիմուլյանտ: Ինաբեկի,
աշխատանքային կարգապահությունն ամրացնող միջոցա-

ռումները պիտք ե անցկացնել կազմակերպված ձևով. իսկ դա նշանակում ե, վոր բրիգադում, կորանտեսության վարչության մեջ պետք ե լինի մեր—բոլղեիլյան ղեղավարություն։ Հետևաբար, կուլակության գեմ մղվող պայքարում սուսպիրած ղեկավարող կազմի, մանավանդ բրիգադի ների ճիշտ ընտրությունը և կուլակազմակերպությունների կողմից աշխատանքային կարգապահությունն ամբաջնելու գործում ցույց տրվող սխատեմատիկ ուժություն—սրանք ահա կարեփորագույն պայմաններ են, վորոնք հնարավորություն են տալիս կոլտնտեսություններում ստեղծելու ուժեղ և որինակելի կարգապահություն։

Աշխատանքային կարգապահությունը—դա դասակարգային սուր պայքարի ասպարեզ ե, ուր կուլակային և հակահեղափոխական տարրերի նեացորդները միշտ փորձում են կազմակերպել մանր-սեփականատիրական տարերք կուտնտեսությունների ղեմ, հետեաբար այս ասպարեզը հասուկ ուշագրության պետք ե արժանանա և զերծ պահպի դասակարգային թշնամու վորոգայթներից, անինա պայքարելով աշխատանքային կարգապահությունը քայլայող և վիճեցնող ամենաչնչին փորձերի վեմ։

Աշխատանքային ամուր կարգապահության համար և կուլակի ու հակահեղափոխական տարրերի ղեմ տարվող պայքարում հսկայական դեր և պատասխանատվություն և ընկնում մեքենատրակտորային կայանների քաղբաժնների վրա, վորոնք կուսակցության կողմից կոչված են լինելու «գյուղում տարվող քաղաքական և կազմակերպչական աշխատանքի կազմակերպչական և քաղաքական աղղեցության և կոլտնտեսականներին ղեկավարելու կենտրոններ» (Յերկը կոմի պլենումի վորոշումներից «գարնանացանի խընդիրների մասին»)։



ՀՀ Ազգային գրադարան



NL0200217

ԳԻՒԸ
Цена 20 գր. 15⁰
коп.

99347

ՏԵՂ Ա Տ 1
ՏԵՂ 0



На армянском языке

Л. П. АНДРЕЕВ

ЗА УКРЕПЛЕНИЕ ТРУДОВОЙ
ДИСЦИПЛИНЫ В КОЛХОЗАХ

ИЗД-ВО „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐՈՒԹՈՒԹՅՈՒՆ

Ա-ԽՍՀՄ-ԴՊԽ, ՄՊԽԿՎԿՎՎ ՓՈՀ, 53.
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԱԳՈՅԵՆՏՐ)